

Տեղեկատվական ամփոփագիր	
Աշխատավարձային վարկ	
Վարկի նպատակը	Սպառողական
Հաճախորդ	Ֆիզիկական անձինք, ովքեր ունեն գրանցված աշխատավարձ կամ եկամուտներ ձեռնարկատիրական գործունեությունից
Վարկի արժույթ	ՀՀ դրամ
Մարման եղանակ	Անուփոփոխ
Վարկի տարեկան անվանական տոկոսադրույք /հաստատուն/	14% - 19,0%
Վարկի տարեկան փաստացի տոկոսադրույք	14,3% - 20,4%
Վարկի ժամկետ	1-60 ամիս
Վարկի գումար /ՀՀ դրամ/	100,000-12,000,000
ԸՊԵ ցուցանիշ	ԸՊԵ ≤ 60% /Բոլոր գործող վարկային պարտավորությունների ամսական վճարումների /ներառյալ հայցվող վարկի/ հարաբերակցությունը՝ եկամտին/
Աշխատանքային փորձ /անընդմեջ վերջին ամիսներ/	3-6 ամիս /անընդմեջ վերջին ամիսներ/
Վաղաժամկետ մարում	Վաղաժամկետ մարում թույլատրվում է և տույժ չի սահմանվում
Միջնորդավճարներ և այլ վճարներ	Չի պահանջվում
Վարկի սպասարկման ամսական վճար	Չի պահանջվում
Ժամկետանց մայր գումարի տույժ	0,1% օրական
Ժամկետանց տոկոսի տույժ	0,13 % օրական
Հաճախորդի/երաշխավորի տարիք	Վարկային հայտը ներկայացնելու պահին տարիքը պետք է լինի նվազագույնը 18 տարեկան, իսկ վարկի վերջնաժամկետին չպետք է գերազանցի 63 տարեկանը
Եկամուտները հավաստող փաստաթուղթ	Տեղեկանք աշխատավայրից և/կամ 6 ամսվա բանկային քաղվածք /պայմանագիր և այլ փաստաթղթեր ըստ անհրաժեշտության/ Կամ՝ հարկային հաշվետվություններ
Հաճախորդի և երաշխավորի կարգավիճակ	ՀՀ-ում հաշվառված ֆիզիկական անձ, ով ունի գրանցման կամ փաստացի բնակության հասցե
Հաճախորդի վարկային պատմությանը ներկայացվող պահանջներ	Վարկի տրամադրման պահին գործող վարկերը և այլ անձանց պարտավորությունների դիմաց տրամադրված երաշխավորությունները չպետք է լինեն ժամկետանց կամ դասակարգված որպես հսկվող կամ ավելի խիստ դասերով, Վերջին 12 ամիսների ընթացքում բոլոր /մարված և գործող/ վարկերի ժամկետանց օրերի ընդհանուր հանրագումարը չպետք է գերազանցի 30 օրացուցային օրը*
Երաշխավորի վարկային պատմությանը ներկայացվող պահանջներ	Վարկի տրամադրման պահին գործող վարկերը և այլ անձանց պարտավորությունների դիմաց տրամադրված երաշխավորությունները չպետք է լինեն ժամկետանց կամ դասակարգված որպես հսկվող կամ ավելի խիստ դասերով

\* "Ա" սեգմենտի հաճախորդների համար վերջին 12 ամիսների ընթացքում բոլոր /մարված և գործող/ վարկերի ժամկետանց օրերի ընդհանուր հանրագումարը կարող է շեղվել 30 օրից մինչև 60 օրացուցային օր, որի դեպքում վարկի տոկոսադրույքը 1%-ային կետով ավել է սահմանվում հանճախորդին հասանելիք տոկոսադրույքից

! Նախքան պայմանագրի կնքումը Բանկը Ձեզ կտրամադրի սպառողական վարկի էական պայմանների անհատական թերթիկը, որում ներկայացված են Ձեզ տրամադրվելիք վարկի էական պայմանները:

### Ծանոթություն

- Վարկի տոկոսները հաշվարկվում են վարկի մնացորդի նկատմամբ՝ ելնելով տարում 365 օրվա հաշվարկից:
- Վարկը տրամադրվում է անկանխիկ եղանակով:
- Վարկը տրամադրվում է Բանկի Գլխամասային գրասենյակում և Բանկի բոլոր մասնաճյուղերում բացառությամբ «Զվարթնոց» և «Տիգրան Մեծ»
- Վարկի տրամադրման դրական որոշման կայացման գործոններն են՝  
Վարկառուի և Երաշխավորի համապատասխանությունը սույն փաստաթղթով սահմանված պահանջներին,
- Վարկի մերժման գործոններն են՝  
Վարկառուի անբավարար եկամուտները:
- Պահանջվող փաստաթղթերը ներկայացնելուց հետո վարկային հայտի վերաբերյալ որոշման կայացում և տրամադրում՝ մինչև 2 աշխատանքային օրվա ընթացքում:
- Վարկի մարման նպատակով մուտքագրված ցանկացած գումար որպես կանոն Բանկի կողմից ուղղվում է մուտքագրման պահին առկա՝ Հաճախորդի կողմից Բանկը Վարկային պայմանագրի ուժով վճարման ենթակա գումարների, այդ թվում՝ տույժերի, սպասարկման վճարների, տոկոսների, Վարկի գումարի մարմանը: Բանկն իրավունք ունի Հաճախորդի հետ կնքվող պայմանագրում վճարման ենթակա գումարների այլ հերթականություն սահմանել:

8. Հաճախորդի կողմից վարկի վաղաժամկետ մարման դեպքում համաձայնագրի են նվազեցվում են վարկի տոկոսագումարները, առկայության դեպքում նաև սպասարկման վճարները, եթե վերջինս հաշվեգրվում է օրական կտրվածքով, իսկ 3-րդ անձանց կատարված վճարները ենթակա չեն նվազեցման:

9. Քաղվածքների, դրանց կրկնօրինակների, տեղեկանքների և այլ ծառայությունների տրամադրման պայմանները և սակագները հրապարակված են Բանկի պաշտոնական կայքում՝ [www.fastbank.am](http://www.fastbank.am), ինչպես նաև տեղադրված են Բանկի գործունեության վայրերում:

10. Վարկային պարտավորությունները վարկառուի կողմից չկատարվելու դեպքում Բանկն իրավունք ունի երաշխավորից պահանջել կատարելու վարկային պարտավորությունները, ինչպես նաև չկատարման հետևանքով վատանալու է երաշխավորի վարկային պատմությունը և հնարավոր է վերջինս գրկվի իր սեփական գույքից:

11. Ուճարողի թե՛ 2-րդ կողմից ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՉԿԱՏԱՐԵԼՈՒ ԿԱՄ ԹԵՐԻ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ԲԱՆԿԸ 3 ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐՎԱ ԸՆԹԱՅՔՈՒՄ ԱՅԴ ՏՎՅԱԼՆԵՐԸ ՈՒՂԱՐԿՈՒՄ Է ՎԱՐԿԱՅԻՆ ԲՅՈՒՐՈ, ՈՐՏԵՂ ԶԵՎԱՎՈՐՎՈՒՄ Է ԶԵՐ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ: ԴՈՒՔ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՔ ՎԱՐԿԱՅԻՆ ԲՅՈՒՐՈՅԻՑ ՏԱՐԵԿԱՆ ՄԵԿ ԱՆԳԱՄ ԱՆՎՃԱՐ ԶԵՆՔ ԲԵՐԵԼ ԶԵՐ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ: ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ՎԱՏ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐՈՂ Է ԽՈՂԸՆԴՈՏԵԼ ԶԵՂ՝ ԱՊԱԳԱՅՈՒՄ ՎԱՐԿ ՍՏԱՆԱԼՈՒ ԺԱՄԱՆԱԿ:

12. Ուճարողի թե՛ 2-րդ կողմից ՎԱՐԿԻ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ ՀԱՇՎԱՐԿՎՈՒՄ ԵՆ ԱՆՎԱՆԱԿԱՆ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ, ԻՍԿ ՏԱՐԵԿԱՆ ՓԱՏԱՑԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԸ ՅՈՒՅՑ Է ՏԱԼԻՍ, ԹԵ ՈՐՔԱՆ ԿԱՐԺԵՆԱ ՎԱՐԿԸ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ ԵՎ ԱՅԼ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԸ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԺԱՄԿԵՏՈՒՄ ԵՎ ԶԱՓԵՐՈՎ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ: ՏԱՐԵԿԱՆ ՓԱՏԱՑԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ ՏԵՂԱԴՐՎԱԾ Է ԲԱՆԿԸ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԿԱՅՔՈՒՄ՝ [www.fastbank.am](http://www.fastbank.am):

13. Ուճարողի թե՛ 2-րդ կողմից ԴՈՒՔ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՔ ՀԱՂՈՐԴԱԿՑՎԵԼ ԲԱՆԿԻ ՀԵՏ ԶԵՐ ՆԱԽԸՆՏՐԱԾ ԵՂԱՆԱԿՈՎ՝ ՓՈՍԱՅԻՆ ԿԱՊԻ ՄԻՋՈՑՈՎ ԿԱՄ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ: ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՍՏԱՅՈՒՄԸ ԱՄԵՆԱՀԱՐՄԱՐԱՎԵՏՆ Է: ԱՅՆ ՀԱՍԱՆԵԼԻ Է 24/7 ՈՒԵԺԻՄՈՎ, ԶԵՐԾ Է ԹՂԹԱՅԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԿՈՐՍՏԻ ՌԻՍԿԵՐԻՑ և ԱՊԱՀՈՎՈՒՄ Է ԳԱՂՏՆԻՈՒԹՅՈՒՆ:

14. Ուճարողի թե՛ 2-րդ կողմից «ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՈՒՆ» ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՐՈՆՄԱՆ, ՀԱՄԵՄԱՏՄԱՆ ԵՎ ԶԵՂ ՀԱՄԱՐ ԱՄԵՆԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՏԱՐԲԵՐԱԿԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԵՇՏԱՅՆՈՂ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ Է:

**ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ԲԱՆԿԸ ՎԵՐԱՀՍԿՎՈՒՄ Է ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ:**